# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

makqolin-ն ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-68/26 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Վարչատեխնիկական փաստաթղթեր - որակի ապահովման գործունեության պլանային և համակարգված ղեկավարման միջոց: Այս փաստաթղթերը ներառում են ձեռնարկության ստանդարտներ, վարչական հրահանգներ, ձեռնարկներ, ընդհանուր դրույթներ, ստորաբաժանումների կանոնակարգեր, պաշտոնեական հրահանգներ և այլ փաստաթղթեր, որոնք սահմանում են անձնակազմի գործառույթները, պատասխանատվությունը և լիազորությունները: Պատվիրատու - անձ (ֆիզիկական կամ իրավաբանական), որը շահագրգռված է կատարողի կողմից աշխատանքի իրականացմամբ, նրա կողմից ծառայությունների մատուցմամբ կամ վաճառողից որևէ արտադրանքի գնմամբ: Նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր - արդյունաբերական և ավելի բարձր մակարդակի փաստաթղթեր, որոնք կարգավորում են գործող օրենսդրության հիման վրա իրականացվող ցանկացած գործունեության վերաբերյալ պետական կառավարման, կարգավորման և վերահսկողության մարմինների կողմից սահմանված պահանջները, նորմերը, կանոններն ու չափանիշները (ԳՕՍՏեր, ՕՍՏեր, նորմեր, կանոններ և այլն): Որակի ապահովում - պլանավորվող և սիստեմատիկ կերպով իրականացվող գործունեություն, որն ուղղված է ատոմային կայանի ստեղծման և շահագործման բոլոր աշխատանքների սահմանված կարգով իրականացմանը և դրանց արդյունքների համապատասխանեցմանը ներկայացվող պահանջներին: Կապալառու - անձ կամ կազմակերպություն, որը գործատուին ծառայություններ է մատուցում գործատուի տարածքում՝ համաձայն պայմանագրի, համաձայնեցված տեխնիկական պահանջների, ժամկետների և պայմանների: Ստանդարտ – որպես կանոն, շահագրգիռ կողմերի մեծամասնության միջև էական հարցերի շուրջ |

| | |
|---|---|
| | հակասությունների բացակայության պայմաններում մշակված և ճանաչված մարմնի կողմից հաստատված նորմատիվ փաստաթուղթ, որում սահմանված են ընդհանուր և բազմակի կիրառության կանոններ, պահանջներ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր, որոնք վերաբերում են որոշակի ոլորտում կարգավորման օպտիմալ աստիճանի հասնելու նպատակով տարբեր տիպի գործունեությունների կամ դրանց արդյունքներին: Տեխնիկական պահանջներ (ՏՊ) – փաստաթուղթ, որը սահմանում է արտադրանքի արտադրման, լրակազմման, մատակարարման, փորձարկման և ընդունման ընթացքում կատարման ենթակա պահանջները՝ ֆունկցիոնալ պահանջներին արտադրանքի համապատասխանությունն ապահովելու նպատակով: Տեխնիկական առաջադրանք (ՏԱ) – պատվիրատուի կողմից գրավոր սահմանված, փաստաթղթերով ձևակերպված և նախագծահետազոտական աշխատանքների կատարողին ներկայացված պահանջների, պայմանների, նպատակների և խնդիրների ցանկ: Նման առաջադրանքը սովորաբար նախորդում է նախագծերի մշակմանը և նախատեսված է մշակողին ուղղորդելու այնպիսի նախագիծ ստեղծելու գործում, որը կբավարարի պատվիրատուի ցանկությունները և կհամապատասխանի մշակվող նախագծի օգտագործման, կիրառման պայմաններին, ինչպես նաև ռեսուրսային սահմանափակումներին: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

makqolin в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-68/26 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |